ԴՈՒ ՀԱՎԱՏՈ՞ՒՄ ԵՍ ՍՐԱՆ

Եվ աղոթքից առաջ կուզենայի ասել սա՝ անցած երեկո, կարծեմ դա անցած երեկոյան էր, ես մի տիկնոջ ասացի. «Եթե դուք միայն անեք այնպես, ինչպես մեզ հանձնարարվել է, որ դա լինի… ուռուցվորությունով երեխան, այն կփոքրանա»: Եվ անցած երեկո երեխայի գլուխը լարային չափով կես մատնաչափ փոքրացել էր: Այնպես որ, տիկինը այն հիմա բերել է այստեղ:

2 Հիմա, պատճառը, թե ինչու ես դա արեցի, քույր, այն է, որ դա որոշակի նպատակով էր: Հասկանո՞ւմ եք: Եթե դուք տեսնեք, որ ինչ–որ շոշափելի բան է կատարվում, դա կմեծացնի ձեր հավատքը, որպեսզի շարունակեք դրան հավատալ: Երբեմն ես դա անում եմ պարզապես, որ, գուցե խնդրեմ մարդուն կանգնել, մեկ կամ երկու քայլ անել, ձեռքը շարժել, մատը շարժել, պարզապես մի բան, որ նրանք կկարողանան այլ կերպ անել, ուղղակի, որ հասկանան, որ ամեն ինչ կարգին է: Նրանք ուղղակի նյարդայնանում և կարծում են, թե դա տեղի չի ունենա, բայց դա միշտ կարտարվում է: Հասկանո՞ւմ եք: Դա պետք է կատարվի:

3 Հիմա քանի՞սն ես ցանկանում, որ իրենց հիշեն աղոթքի մեջ: Պարզապես չէի՞ք բարձրացնի ձեր ձեռքերը և ասի. «Տե՛ր, շնորհի՛ր դա»: Խոնարհենք մեր գլուխները:

4 Տե՛ր, երբ մենք լսում ենք եկեղեցու այս հրաշալի հին օրհներգը, գրված իմ թանկագին ընկերոջ Փոլ Ռադերի կողմից՝ «Միայն հավատա», մենք մտածում ենք հիմա այն տղայի մասին, որ բերվեց աշակերտների մոտ իր հոր կողմից, ոչ ավելի, քան տաս օր առաջ այն բանից հետո, երբ Հիսուսը նրանց իշխանություն էր տվել դևերին հանելու և հիվանդներին բժշկելու, և ահա նրանք ամբողջությամբ պարտություն կրեցին ընկնավորի դեպքում: Եվ նրանք տեսան, որ մեր Տերը գալիս է: Եվ նրա հայրը վազեց և ասաց. «Տե՛ր, ողորմի՛ր մեզ: Սատանան տարբեր կերպերով տանջվում է իմ որդուն: Ես նրան բերեցի Քո աշակերտների մոտ, բայց նրանք չկարողացան նրան բժշկել»:

5 Հիսուսն ասաց. «Ես կարող եմ, եթե հավատաս։
Միայն հավատա»։ Ո՜վ Աստված, Դու այդ ժամանակվանից
ամենևին էլ չես փոխվել, Դու նույն սիրող, քաղցր և
կարեկցող Աստվածն ես։ Ինչպիսին այն ժամանակ էիր,
այնպիսին էլ այսօր ես։ Եվ Տե՛ր, այդ հոր նման մենք բոլորս
աղաղակում ենք. «Տե՛ր, օգնի՛ր մեր անհավատությանը»։
Դա այնքան պարզ է. մենք պարզապես սայթաքում ենք
դրա վրայով, Հայր։

6 Մենք ուզում ենք գոհություն և փառք մատուցել
Քեզ անցած երեկո այդ երեխային հպվելու համար, երբ
տեսանք այդ գանգը, որ այտուցված էր, այսինքն՝ ոսկորը,
որ ցցված էր, անցած երեկո կես մատնաչափով իջել էր։
Մենք երախտապարտ ենք դրա համար, Հայր։ Երբ մենք
գիտենք, որ մեր բժիշկները հետազոտությունների մեջ
ոչինչ չունեն դրա վերաբերյալ, նրանք ոչինչ չեն կարող
անել այդ հարցում, բայց Դու միշտ Աստված ես, բոլոր
իրավիճակների Տերը։ Մենք շնորհակալ ենք Քեզանից,
Հայր։ Շնորհակալ ենք մոր այս նվիրվածության,
քնքշության և հնազանդության համար, որ բերեց
այս լարը և դրեց այստեղ՝ թղթի այս կտորի վրա՝
հանրությանը ցույց տալու համար իր վկայությունն
Աստծո փառքի համար։ Թող նրա փոքրիկն ապրի և առողջ
երեխա լինի Քո փառքի համար։

7 Նայի՛ր բոլոր այդ բարձրացրած ձեռքերին, Հայր։
Նրանցից յուրաքանչյուրը կարիք ուներ։ Ես էլ եմ
բարձրացրել իմ ձեռքը, Հայր, ես կարիք ունեմ։ Եվ ահա
այստեղ շատ են, նամակի տեսքով կամ այս տուփի մեջ,
որոնք կարիքավոր են, մարդիկ, ովքեր իսկապես կարիքի
մեջ են։ Թող դա կատարվի, Տե՛ր, որ ամենքը ստանան
իրենց խնդրածն այս երեկո։ Թող նրանք ընդունեն այս
մոր վկայությունը, ուղղակի որպես մի օրինակ, որ ցույց
է տալիս, որ երբ Դու որևէ բան ես ասում, դա վերջացած
է։ Դա… Դուք… Այն ամենը, ինչ մենք պետք է անենք,
ընդունելն ու դրա հիման վրա գործելն է։ Դա ավարտված
գործ է։

8 Շնորհի՛ր, Տե՛ր, որ այս նամակներից և
թաշկինակներից յուրաքանչյուրը, մարդիկ, որոնց վրա
կդրվեն սրանք, բժշկվեն։ Ամենքը, որ բարձրացրել են
իրենց ձեռքերը, Հայր, թող նրանք ստանան իրենց սրտի
փափագը։ Մենք դա խնդրում ենք Հիսուսի Անունով։
Ամեն։ Կարող եք նստել։

9 Ես պարզապես ուզում էի ձեզ ցույց տալ այստեղ

լարը, որ տիկինը (Ահա, խնդրեմ: Ըհը՜)... որ փոքրիկ երեխայի գլուխը փոքրացել է, ինչպես անցած երեկո Տերը խոստացել էր Սուրբ Հոգու միջոցով: Մի՞թե սքանչելի չէ Նա: Այնպես որ, դա այնքան քաջություն է տալիս մեզ, որ հավատք ունենանք և հավատանք:

10 Հիմա, երբ Հիսուսն ասաց այն ծառին Մարկ. 11. 23–ում. «Այսուհետև ոչ ոք քեզնից չուտի», գուցե Նա չաղաղակեց: Դե, անկեղծ ասած, Նա շատ հանգիստ էր այդ հարցում, որ Նրա աշակերտներն ուղղակի... Կարծում եմ՝ նրանցից մեկը լսեց Նրան: Եվ դա... Երբ այդ ընկնավորը, երբ նա հայտնվեց Տեր Հիսուսի առջև, այդ երեխան ունեցավ ամենաուժեղ նոպան, որ նա երբևէ ունեցել էր, հավանաբար, մեռածի պես ընկավ գետնին, բայց նա գիտակցեց, որ հանդիպել է Մեկին, Ով այդ առաքյալներից շատ ավելի բարձր հավատք ուներ:

11 Հիմա, ես կուզեի, որ ինչ–որ մեկը, ով չի հավատում աստվածային բժշկությանը, դիտի սա: Հիսուսնը նրանց ոգիներ հանելու իշխանություն տվեց, և նրանք ձախողվեցին: Ոչ թե իշխանությունը ձախողվեց, այլ նրանք ձախողվեցին: Հիսուսը նրանց ասաց.

«Ինչո՞ւ մենք չկարողացանք նրան հանել»:

Նա ասաց. «Ձեր անհավատության պատճառով»:

12 Եկեղեցին դեռ իշխանություն ունի: Աստված երբեք Իր իշխանությունը վեր չի առել եկեղեցուց, բայց եկեղեցին բավական հավատք չունի դրա հիման վրա գործելու համար: Ահա և վերջ: Դա ուղղակի այնքան պարզ է: Երբեմն մենք դա փորձում ենք այնքան բարդացնել, բայց որքան ավելին պարզեցնենք Ավետարանը, այնքան ավելի իրականություն կստանաք, երբ իրոք պարզ դառնաք դրա հետ. Աստված է այդպես ասում. դա կարգավորում է ամեն բան և վերջ: Պարզապես հավատացե՛ք դրան, գնացե՛ք առաջ:

13 Երբ Հիսուսն ասաց. «Ոչ ոք քեզանից չուտի», տերևները նույնքան գեղեցիկ և փայլուն էին, ինչպես և առաջ: Ծառի կեղևը նույն տեսքն ուներ, բայց հողի խորքում՝ այդ արմատների մեջ կյանքը սկսեց սպառվել:

14 Նույնպես էլ քաղցկեղի, ցանկացած տեսակի հիվանդության դեպքում է, որը, որը կարող է անցնել ձեր մտքով: Երբ կարողանում ես Աստծո Խոսքը ընդունել, այնտեղ՝ արմատների խորքում, քաղցկեղը կարող է այնտեղ լինել. ձեր ձեռքը կարող է այդպես էլ փայտացած

լինել: Դա աստվածային բժշկության հետ ոչ մի կապ չունի: Սա. «Եթե կարող ես հավատալ»-ն է: Հասկանո՞ւմ եք: Ներքևում՝ ինչ-որ տեղում, այն արդեն գործի է անցել:

15 Հիսուսն է ասել. «Եթե դուք այս լեռանն ասեք՝ շարժվի՛ր, և չկասկածեք ձեր սրտում, այլ հավատաք, որ ձեր ասածը կկատարվի, ապա կստանաք այն, ինչ ասացիք»: Մի՞թե դա հրաշալի չէ: Ումի՞ց է դա եկել: Աստծո Որդուց, Ում Խոսքերը... Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց հիմա... բայց Իր Խոսքերը չեն անցնի:

16 Դա անելու միակ ձևը՝ ճիշտ նպատակ ու ճիշտ շարժառիթ ունենալն է: Հիմա, եթե ես դուրս գամ այստեղ և ասեմ. «Ես ձեզ ցույց կտամ, որ կարող եմ այս սարը շարժել. «Սա՛ր, շարժվի՛ր»: Այն երբեք չի շարժվի: Իհարկե՝ ոչ: Կարևոր չէ, թե ես ինչ եմ ունեցել: Դա պետք է լինի... Նախ դուք պետք է Աստծո կամքը փնտրեք:

17 Այդ է պատճառը, որ սովորաբար աղոթքի շարքերում, ինձ, ինձ հասնում է ամենադժվարը, որովհետև դա մի բան է, որ անցել է շարքերով և այլն, և ահա, թե որտեղ ես դու այն հետ ստանում: Բայց հասկանում եք, եթե դուք չխոստովանված մեղք ունեք... Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, նախքան իմ խնդրելը, որ չար ոգին հեռանա: Ես դիտում եմ այդ գործը, որպեսզի համոզվեմ, որ այդ կյանքում չկա ոչ մի բան, որ կարող է որևէ բանում արգելք հանդիսանալ, հասկանում եք, որովհետև հիշե՛ք, այդ պարգևները, դու կարող ես դրանց հետ խնդիրների մեջ հայտնվել:

18 Աստված, հիշում եք, թե ինչպես մի անգամ մարգարեին տվեց... մարդուն մարգարե դարձրեց՝ Մովսեսին և ասաց, որ գնա և ասի ժայռին: Եվ մարգարեն ոգևորված դուրս եկավ և հարվածեց ժայռին, խոսելով Քրիստոսի տկարության մասին, որ Նա պետք է երկրորդ անգամ մեռներ կամ երկրորդ անգամ խոցվեր: Նա իշխանություն ուներ դա բերելու, բայց դա Աստծո կամքը չէր:

19 Ես երբեք չեմ կարողացել հավատալ, որ դա Աստծո կամքն էր, որ Եղիսեն շրջվեց, որովհետև երեխաները ծաղրում էին նրան ճաղատ լինելու պատճառով, չեմ կարծում, որ նա պետք է դա աներ: Բայց նա մարգարե էր, և բարկացած էր, և նա անիծեց այդ երեխաներին, և երկու էգ արջ քառասուներկու անմեղ մանուկների սպանեցին: Հասկանո՞ւմ եք: Բայց ես չեմ կարծում, որ նա պետք է դա աներ: Եվ դա պարզապես, պարզապես... մենք...

20 Աստված, ես հավատում եմ այսօր, որ Իր եկեղեցին զորությամբ օժտելուց առաջ, Նա փորձում է տեսնել, թե ինչ կանի Իր եկեղեցին։

21 Մենք… գուցե հաջորդ անգամ, եթե Տերը կամենա, երբ կվերադառնամ, ժամանակ կունենանք նման բանի վրա կանգ առնելու, կամ ինչ-որ բանի վրա, որ կատարվելու է, և այդ ժամանակ ավելի շատ կիմանանք դրա մասին։

22 Բայց եթե դուք ուղղակի խոսք եք ասում, ասեք. «Տե՛ր, ես հավատում եմ դրան», մի՛ կասկածեք, ձեր սրտում դա նկատի ունեցեք…

23 Հիմա, ասենք օրինակ, ես եղել եմ հովտում եմ և չ… Ես քարոզում եմ միլիոնավոր մարդկանց, բայց այնտեղ՝ սարի հետևում հարյուր հոգանոց մի խումբ կա, և նրանք մեռնում են առանց Քիստոսին ճանաչելու։ Լավ, ես այնտեղ քարոզելու համար մի միլիոն մարդ ունեմ, բայց այնուամենայնիվ, Ինչ-որ բան իմ սրտում ասում է ինձ. «Գնա՛ այդ մարդկանց մոտ։ Գնա՛ նրանց մոտ։ Նրանք կործանվում են»։ Ես ինքս չեմ ուզում գնալ, մինչդեռ իմ մեջ Մի Բան կա։ Հասկանում եք, այդ դեպքում դա Աստված է, որ գործում է։ Տեսեք, թե նպատակն ինչն է, գնալու շարժառիթը որն է, ոչ թե ինքնա… Հիմա, եթե ես ասեմ. «Դե…»։ Եթե այնտեղ գնալու իմ նպատակը ճիշտ է, բայց հետո ես գալիս եմ այստեղ, և ահա մի մեծ սար։ Ես ասում եմ. «Գիտեք, եթե ես անցնեմ սարի մյուս կողմը և փրկեմ այդ հարյուր հոգուն, մի օր նրանք արձան կկանգնեցեն այնտեղ. Բրանհամ եղբայր՝ մեծ միսիոներ»։ Հիմա, իմ շարժառիթը սխալ է։ Սարը փուլ չի գալու։ Ո՛չ, պարո՛ն։

24 Բայց երբ իմ շարժառիթն ու նպատակը ճիշտ են, և Աստված իմ սրտում առաջնորդում է ինձ, և ես չեմ կարող անցնել սարի ոչ վրայով, ոչ կողքով և ոչ էլ տակից, ես կասեմ. «Սա՛ր, շարժվի՛ր»։ Գուցե այն… Երբ ես դա ասեմ, այդ տեսակ ճիշտ հոգով ասեմ դա, առաջնորդված Սուրբ Հոգով, Աստծո կամքի մեջ, այնտեղ գուցե մի փոքրիկ գդալի չափ թափվի այդ սարից, բայց դա ճանապարհին կլինի։ Հաջորդ օրն այնտեղ կարող է երկու ֆունտ թափվել։ Մյուս օրը քառորդ տոննա։ Եվ մի ամսվա մեջ կարող է հինգ տոննա թափվել։ Ինչ է դա ասում։ Որ գուցե մենք նույնիսկ դա դեռ չենք տեսնում, բայց այն շարժվում է, ճանապարհին է։ Ես կմնամ այնտեղ և կհետևեմ դրա իրականացմանը, որովհետև Աստված է այդպես ասել և դա կարգավորում է ամեն բան։

25 Դուք կարո՞ղ եք այս երեկո այդպես մտածել ձեր մայրիկի մասին այնտեղ: Շատ լավ, եթե դուք մտածեք դա, նա կառողջանա: Լավ: Դա եթե պարզապես հավատաք դրան. պարզապես խոսքն ասեք և կառչեք դրան: Հասկանո՞ւմ եք: Պարզապես հավատացե՛ք դրան, կառչեք դրան: Սա հավիտենական կյանք է:

26 Եվ այսպես, վաղը կեսօրին... Ես երեկոյան Բիլլիին ասել էի, որ աղոթքի քարտեր չբաժանի և ես ուզում էի խոսք ասել: Խոստովանում եմ, ճիշտն ասած, հունվարից ճամփորդությունների մեջ եմ եղել օվկիանոսի այն կողմում, նորից հետ, Ֆինիկս, տուն և նորից հետ, և այդ ամենը բոլորովին (այդ զանազանությունը), մինչև որ ես այնքան թույլ եմ, որ երբեմն հազիվ եմ հասկանում, թե որտեղ եմ գտնցում: Դա ինձ գրեթե ուժասպառ է արել:

27 Եվ հետո ես պետք է մեկնեմ, և նրանք... դուք, դուք, եղբայրներն ինձ հրավիրեցին ևս մի քանի օր մնալ այնտեղ: Որքա՜ն եմ ես գնահատում դա: Ես, անշուշտ, կարծում եմ, որ այստեղ ծառայողների հրաշալի մի խումբ է: Կուզեի մենք մի փոքր ավելի շատ ժամանակ ունենաինք հաղորդակցության համար: Եթե Տերը կամենա, ես մի օր կվերադառնամ: Ուրիշ ոչինչ, պարզապես մի եկեղեցուց մյուսը գնալ, պտտվել քաղաքով և այցելել ձեզ բոլորիդ: Ուրախ կլինեի դա անել. ցանկացած բան, որ ես կարող եմ անել, Աստծո թագավորությանը օգնելու համար, այսինքն, եթե դուք ուզում եք, որ անեմ դա: Եվ մի օր վերադառնալ և միանալ մեզ և ինչ-որ մի վայրում հրաշալի, լավ ծառայություն ունենալ:

28 Եվ հիշե՛ք, եղբայրնե՛ր, ես կաղոթեմ ձեզ համար: Դա հաստատ է: Եվ ես ուզում եմ, որ դուք բոլորդ աղոթեք ինձ համար, բոլորդ:

29 Իսկ այժմ ես, ես... Վաղը առավոտյան ամբողջ քաղաքով եկեղեցական ծառայություններ են անցկացվելու բոլոր այս տարբեր հրաշալի եկեղեցիներում:

30 Հիմա, Ջեֆերսոնվիլից մի քանի խմբեր են այստեղ: Իմ ընկերներից մի քանիսը, եկեղեցու իմ հոգաբարձուներից մեկը՝ եղբայր Ֆրեդ Սոտմանն այստեղ է: Ինձ չհաջողվեց տեսնել նրան հավաքույթի ժամանակ: Եվ եղբայր... Օ՜հ, իմ ընկերներից շատ ուրիշներն այնտեղից՝ Ջեֆերսոնվիլից, իմ գլխ... իմ քարտուղարն է այնտեղ և, և բոլորն այստեղ

են՝ ինչ-որ մի տեղում, հավաքույթում: Ես դեռ չեմ տեսել նրանց:

31 Եվ եղբայները, այս քաղաքում մի քանի հրաշալի եկեղեցիներ կան: Եվ մնացած բոլոր այցելուներդ գտեք նրացից մեկը և վաղը գնացեք այդ եկեղեցիները: Դրանք օգտակար կլինեն ձեզ, վստահ եմ: Նրանք եղբայրներ են, ովքեր հավատում են այս տեսակի ծառայությանը: Այդ է պատճառը, որ նրանք նստած են այստեղ՝ բեմահարթակին և այնտեղ՝ ներքևում, որովհետև նրանք հավատում են դրան: Եվ ես գնահատում եմ այդ տղամարդկանց:

32 Տե՛ր, օրհնի՛ր այստեղի Լրիվ Ավետարանի գործարարների այս մասնաճյուղը, ով, ով հովանավորել է այս հավաքույթը: Կա... Կարծում եմ, որ դա ճիշտ է, որ հովանավորել է հավաքույթը: Ես, ես շատ եմ խոսում իրենց հովանավորների մասին, որովհետև այնտեղ... Մենք չպիտի այդպիսին լինենք, բայց շատ անգամներ եղբայրները թույլ են տալիս փոքրիկ, չնչին տարաձայնություններ. ինչպես օրինակ մի մարդ հավատում է փոքրիկ *ինչ-որ բանին*, իսկ մյուսը փոքրիկ այլ *բանին*.Դա մի փոքր տարաձայնություններ է առաջացնում և վերադարձնում անցյալի հին վերքերը, այն պետք է սպիանար ժամանակին, բայց այն, այն... Եվ եթե դուք, կամ, եթե ես վերցնեմ Լրիվ Ավետարանի գործարարներին, այդ դեպքում դա մի տեսակ օգնում է կապել դա, և մենք միասին հավաքվում ենք և իսկական հաղորդակցություն ենք ունենում միասին, պարզապես շատ լավ ժամանակ: Եվ մենք գնահատում ենք դա: Թող Աստված օրհնի այդ մասնաճուղը: Ես հավատում եմ, որ Տերը վեր է հանել դա որոշակի նպատակով:

33 Հիմա... իսկ հետո ես վերջերս հրաշալի արտոնություն ունեցա տեսնելու Օրալ Ռոբերտս եղբոր շենքը: Եվ հը՜մ, այնպիսի հսկայական շենք է, այնքան գեղեցիկ է: Դա, դա Պենտեկոստեին նվիրված հուշարձան է:

34 Հետո՝ գնացի եղբայր Թոմի Օսբորնի մոտ, մեկ այլ հիանալի մի վայր, Աստծո հրաշալի մի անձնավորություն է, ով... Եղբայր Թոմը, ես, և եղբայր Օրալը պարզապես մտերիմ, շատ մտերիմ եղբայրներ ենք, և մենք սիրում ենք իրար, և ջանում ենք անել լավագույնը, ամեն ինչ, ինչ կարող ենք անել ի օգուտ Աստծո թագավորության մարդկանց համար:

35 Այսպես որ ես, անշուշտ, գնահատում եմ այդ մարդկանց, որ այստեղ են՝ այս քաղաքում, ձեր ունեցած մնացած հիանալի այրերի շարքում: Դուք՝ գառնուկներդ հրաշալի հովիվներ ունեք: Ես պարզապես այդպես կասեմ: Թող Տերը շարունակի լինել ձեր բոլորի հետ. սա է իմ աղոթքը: Իսկ հիմա վաղը կեսօրից հետո ես... Ժամը քանիսի՞ն է ծառայությունը սկսվելու, եղբայրներ: Երկուսն անց երեսուն: Ասենք թե ժամը մեկին, մեկին կամ մեկ անց երեսուն պետք է լինեք այստեղ, որ չխանգարեն մյուս ծառայություններին:

36 Հիմա եթե տղաները դեռ ձեզ չեն ասել, որ այս երեկո նրանք ունեն մի քամի գրքեր, նկարներ և այլն, ձայներիզներ, ձայնապնակներ և...ծառայություններից, և նրանք վաճառում են դրանք: Բայց մենք թույլ չենք տա, որ դրանք վաճառեն շաբաթ օրը՝ վաղը: Ոչ գրքեր, ոչ էլ որևէ բան վաղը չեն վաճառվելու: Այնպես որ մենք չենք... մենք երբեք դա թույլ չենք տվել: Թեև շատերն ասում են. «Դուք չարաչար սխալվում եք...»:

37 Եվ ծեր Բոսվորդ հայրիկը սովորություն ուներ ինձ ասելու. «Օ՛հ, Բրանհամ եղբայր դու այստեղ սխալ ես», բայց ես այսպես եմ կարծում (հասկանո՞ւմ եք), և, ես, ես կարծում եմ: Եթե ձեզ ինչ–որ բան հարկավոր լինի, նրանք կտան ձեզ, բայց եթե դուք... Բայց շաբաթ օրը մենք չենք կարող վաճառել: Ո՛չ: Ահա և վերջ: Եթե ես հավատում եմ դրան, պիտի ապրեմ դրանով, պարզապես... Ես ինքս պիտի ապրեմ: Հասկանո՞ւմ եք: Եվ ես, ես պիտի ապրեմ իմ համոզմունքների համաձայն և, որ... Կամ դուք կարող եք տուն ուղարկել, տանը մոտ կամ այդ վայրին մոտ և ստանալ դա:

38 Հիմա այսօր երեկոյան, օ՛հ, եկե՛ք բոլորս պարզապես մոռանանք դրա մասին, օ՛հ, որ անելու ինչ–որ գործ կա, կամ որևէ այլ բան կամ օրվա հոգսերը: Եկե՛ք պարզապես ամեն ինչ մի կողմ դնենք և մի քանի րոպեյով նայենք Խոսքին և տեսնենք, թե Աստված ինչ կխոսի մեզ հետ Իր Խոսքի միջոցով: Եվ թող ես աղոթեմ, որ Աստված պարզապես մեզ տա շատ մեծ օրհնություններ այս երեկո:

39 Ջենի՛, կարո՞ղ ես նրան առևանգել ինձ համար: Կարո՞ղ ես այդ փոքրիկ աղջկան առևանգել ինձ համար: Մի՞թե նա լավիկը չի: Կուզեի՞ր ինձ հետ տուն գնալ և խաղալ մոտ *այս* հասակի իմ փոքրիկ Սառայի հետ: Օ՛հ, կուզեի՞ր: Ես կուզենայի, որ դու գաս: Նա գրեթե քո չափ է, և նա հայրիկի փոքրիկ աղջիկն է: Ըհ՜ը:

Հըմ: Եվ ես համոզված եմ, որ դու, դու էլ ես սիրում քո հայրիկին, այդպես չէ՞: Մամայի՞ն: Օ՛հ, իհարկե, սիրում ես: Ամենագեղեցիկ աղջիկն է, ես այստեղ նստած՝ նայում եմ նրան: Փոքրիկ աչուքները նման են վերմակի միջի երկու այրված անցքերի իսկ, իսկ շագանակագույն մազերը:

40 Ես ուղղակի սիրում եմ մանուկներին: Տանը ես երկու փոքրիկ աղջիկ ունեմ: Նրանցից մեկը Ռեբեկան է, իսկ մյուսը՝ Սառան:

41 Որոշ ժամանակ առաջ ես ճանապարհորդության մեջ էի: Նրանք երկուսն էլ հայրիկի փոքրիկ աղջիկներն են, գիտեք, և ես սիրում եմ նրանց: Եվ հենց որ ես ներս եմ մտնում, պետք է նրանց շալակելով տանեմ և... միայն թե Բեկին չափազանց մեծ է դառնում դրա համար, նա իմ նման մեծ է: Նա մեջքս կկոտրեր հիմա, նա... բայց, նա դեռևս հայրիկի փոքրիկ աղջիկն է: Եվ հիմա, մոտավորապես մյուս տարի ուզում ենք նրան ինչ-որ տեղ՝ Աստվածաշնչյան դպրոց ուղարկել, հեռու հանրային դպրոցներից:

42 Եվ այդ ժամանակ նրանք սպասում էին հայրիկի տուն գալուն, գիտեք: Ես գնացել էի հավաքույթի: Իսկ վաղը երեկոյան նրանք մինչև կեսգիշեր կսպասեն ինձ, մինչ կփորձեմ հասնել տուն: Եվ այսպես, ես հասա վաղ առավոտյան՝ ժամը երեքի կամ չորսի կողմերն էր: Մայրիկը դուռը բաց արեց և ինձ ներս թողեց, այնքան հոգնած ու հյուծված էի, ես... Այստեղ՝ բեմահարթակի վրա ես... երբ... օծության ներքո քեզ շատ լավ ես զգում, բայց երբ այն հեռանում է քեզանից, ահա թե որտեղ ես դու խնդիր ունենում: Քանի՞սը գիտեին դա: Դե, իհարկե, դա այդպես է:

43 Տեսե՛ք, Եղիան բարձրացավ լեռան վրա և երկնքից կրակ իջեցրեց, անձրև իջեցրեց, իսկ հետո, երբ Հոգին լքեց նրան քառասուն օր թափառեց անապատում, և Աստված գտավ նրան թաքնված քարանձավի ինչ-որ մասում:

44 Հովնանը՝ նա իջավ և կենդանի մնաց կետի փորում երեք օր ու գիշեր, փսխվեց ափ և շրջեց՝ քարոզելով: Ամբողջ քաղաքն ապաշխարեց և Աստծուն դարձավ: Սակայն երբ օծությունը լքեց նրան, բարձրացավ բլուրի գագաթին և խնդրեց Աստծուն, որ իր հոգին վեր առնի: Տեսնո՞ւմ եք:

45 Վերջերս կանգնած էի Վիլյամ Կուպերի շիրիմի կողքին,

ով գրել է այդ հայտնի օրհներգը, որը մենք օգտագործում եք մեր հաղորդության ծառայության ժամանակ.

Արյունով լցված մի աղբյուր կա,
Որ հոսում է Էմմանուելի երակներից,
Որի մեջ մեղավորներն են սուզվում,

46 Երբևէ լսե՞լ եք, թե նա ինչ... կատարվեց նրա հետ: Այն բանից հետո, երբ ներշնչանքը լքեց նրան, փորձեց գետ գտնել՝ ինքնասպանություն կատարելու համար:

47 Ես ապրում եմ Հին Քենթուկիի Տան դիմաց: Ստեֆան Ֆոստերն Ամերիկային տվել է իր ամենահայտնի ժողովրդական երգերը: Երբ նա գրում էր, ոգեշնչում էր ստանում՝ այդ ոգեշնչումը, երգ էր գրում, հետո, երբ դուրս էր գալիս դրանից, գնում խմում էր: Ի վերջո կանչեց ծառային, ածելին վերցրեց և ինքնասպան եղավ:

48 Մարդիկ չգիտեն, թե այդ հոգևոր ոլորտում ապրող մարդիկ ինչի միջով են անցնում: Հիմա *այստեղ* զգում ես, որ կարող ես սարեր շարժել: Բայց թող օծությունը քեզ լքի, և դուրս գաս այդ դռնով (եթե որևէ մեկն այնտեղ քեզ չբռնի, հասկանում եք) իսկ հետո, գուցե մի քանի ժամ դու դժվարությամբ ես հասկանում, թե որտեղ ես գտնվում: Իսկ հետո գիշեր առ գիշեր այն վերցնում է քեզանից լավագույնը:

49 Եվ փոքրիկ... Ուզում եմ ձեզ պատմել փոքրիկ Սառայի և Ռեբեկայի մասին: Եվ այսպես, հաջորդ առավոտ ես չէի կարողանում քնել, բարձրացա՝ նստած էի բազկաթոռին, և որոշ ժամանակ անց Բեկին՝ լինելով ամենամեծը, նա ավելի երկար ոտքեր ունի, քան Սառան, Բեկին վազելով գալիս... արթնացավ, անկողնուց դուրս թռավ, չարթնացնելով փոքրիկ քրոջը, և տան միջով անցավ՝ ամբողջ ուժով վազելով: Նա ասում էր. «Հայրի՛կ, հայրի՛կ...»: Ես մի ոտքս դուրս դրեցի, և նա թռավ այնտեղ՝ բավականին լավ հավասարակշռությունը պահելով: Մի տեսակ ժամանակակից եկեղեցու նման, հասկանում եք, վաղուց այդ գործի մեջ է, գիտեք, մի քանի հարյուր տարի է: Նա իր հավասարակշռությունը շատ լավ կարողանում էր պահել, և նա գրկեց ինձ ու ասաց. «Օ՛հ, հայրի՛կս, հայրի՛կս...»:

50 Եվ այդ իրարանցման մեջ փոքրիկ Սառան արթնացավ: Դե, ես չգիտեմ, արդյոք ձեր երեխաներն անում են դա, թե ոչ, իմն անում է՝ ավելի փոքրը հագնում է մեծի շորերը: Եվ Սառայի հագին Բեկիի գիշերազգեստն

էր, ոտքերը մոտավորապես այս չափի էին, գիտեք: Եվ ահա նա՝ փոքրիկ, կարճահասակ մարդ, ընկնելով, սայթակելով գալիս է: Եվ այսպես, Բեկին շրջվեց, ասաց. «Սա՛ռա, քույրիկս, ես մի բան եմ ուզում քեզ ասել,— ասաց,— ես եմ եղել այստեղ առաջինը: Եվ ես մենաշնորհ ունեմ: Այնպես որ հայիկը ամբողջովին իմն է, և քեզ ոչինչ չի մնացել»:

51 Այդպես են որոշ մարդիկ փորձում մտածել կրոնի մասին, այդպես չէ՞: Ուհու: Դա ճիշտ է:

52 Եվ խեղճ փոքրիկ Սառան իր փոքրիկ շրթունքը կախեց, և նրա սև աչիկները նայեցին ինձ ու նա սկսեց լաց լինել: Իսկ Բեկին այտը հենել էր այտիս՝ գրկելով ինձ: Ես սիրում եմ նրան: Եվ Սառան սկսեց հեռանալ, որովհետև հայրիկը ամբողջովին Բեկիինն էր: Ես *այսպես* դուրս հանեցի մյուս ծունկս և *այդպես* նշան արեցի նրան: Օ՛հ, նա անմիջապես աշխուժացավ, վազեց և թռավ ծնկիս վրա, որ... Նա այնքան էլ մեծ հասակ չունի և նրա ոտքերը նույնիսկ հատակին չէին հասնում: Նա մի տեսակ երերալով էր քայլում (գուցե իմ նման, պարզապես մի փոքր երերալով, գիտեք), և նա չէր... չէր կարողանում հասնել հատակին: Նա մեծ հարանվանություն չէր, գիտեք, և այսպես նա չէր կարողանում հասնել պինդ ամուր հատակին: Նա դեռ բավական ժամանակ չէր աշխարհում:

53 Եվ ասպիսով, նա մի տեսակ երերում էր և ես *այսպես* երկու ձեռքերս պարզեցի և գրկեցի նրան, սեղմելով դեպի ինձ, և նրա այդ փոքրիկ սև աչքերը փայեցին և հետ նայեց Ռեբեկային: Նա ասաց. «Ռեբե՛կա, քույրիկս,— նա, նա ասաց,— գոցե ճիշտ է, որ հայրիկը ամբողջովին քոնն է, բայց ես ուզում եմ, որ դու մի բան իմանաս՝ ես հայրիկինն եմ ամբողջովին»: Այնպես որ...

54 Դա... Միայն թե նա ինձ ամբողջովին վերցներ: Գուցե ես կրթություն չունեմ՝ մեծ բաներ անելու համար, բայց քանի դեռ ես գիտեմ, որ ես ամբողջովին Նրանն եմ, իմ երերալու մեջ, պարզապես թող Նա Իր երկու ձեռքերով ինձ գրկի, ես դրանից ուղղակի ինձ հրաշալի կզգամ:

55 Խոսքը բացելուց առաջ եկե՛ք ևս մի փոքրիկ աղոթք մատուցենք Նրան:

56 Հիմա, Երկնայի՛ն Հայր, մենք գիտակցում ենք, որ մենք նույնպես երեխաների նման ենք: Եվ, և Դու սիրում ես լինել մեզ հետ և երկրպագություն անել մեզ հետ: Եվ երբ մենք երկրպագում ենք Քեզ, և Դու սիրում ու պահում ես

մեզ Քո ձեռքերի վրա, և ուղարկում ես Քո Սուրբ Հոգին, և իմաց ես մեզ տալիս, որ Դու կենդանի ես և Դո՛ւ ես մեր Հայրը, մենք այնքա՞ն շնորհակալ ենք Քեզ: Հիմա, թող Սուրբ Հոգին գա մեզ մոտ այս եկերո: Սիրի՛ր ամեն սիրտ, Տե՛ր: Տու՛ր մեզ թարմ օրհնություն: Հեղի՛ր ողորմության ցողի կաթիլները մեզ վրա, Հա՛յր: Մի՛ նայիր մեր մեղքերին: Նրանք չափազանց շատ են: Տե՛ր, պարզապես ների՛ր դրանք: Անտեսի՛ր դրանք Հա՛յր, և պարզապես վերցրո՛ւ մեզ Քո ձեռքերի վրա և, և բժշկի՛ր մեր հիվանդությունը, և, և մաքրի՛ր մեր անձերը, և ազատի՛ր մեր հոգիները, Տե՛ր, որ կարողանանք երկրպագել և փառաբանել Քեզ, լինել մանուկների նման, ովքեր վազվզում են տնով մեկ, պարզապես իմանալով, որ Հայրիկը հսկում է մեզ վրա: Շնորհի՛ր դա, Տե՛ր:

57 Հիմա, ոչ մեկը չի կարող մեկնաբանել Խոսքը: Մենք գիտակցում ենք դա: Հովհաննեսը տեսավ Գիրքը գահի վրա Նստածի աջ ձեռքում, և ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրա ու ո՛չ երկրի տակ չկար արժանի մեկը, որ վերցներ այդ Գիրքը՝ բացելու Այն, կամ քանդելու կնիքները: Եվ ահա, մոտեցավ մի Գառնուկ, որ մորթված էր աշխարհի հիմնադրումից ի վեր: Նա արժանի էր: Եվ Նա վերցրեց Գիրքը, կոտրեց կնիքները և բացեց Այն: Ո՛վ Գառնուկ, ե՛կ այս երեկո: Բացի՛ր այս Գիրքը մեզ համար, Հա՛յր, երբ մենք ակնկալում ենք Քեզանից, որովհետև մենք դա խնդրում ենք Հիսուսի՝ Աստծո Գառնուկի Անունով: Ամեն:

58 Այս երեկո ես ընտրել եմ երեք բառից բաղկացած փոքրիկ սուրբգրային մի համար: Բայց ես նախ ուզում եմ մեկ կամ երկու համար կարդալ Հովհաննեսի Ավետարանից, 11–րդ գլխի 23–րդ համարից սկսած.

> *Հիսուսը նրան ասաց. «Քո եղբայրը հարություն պիտի առնի»:*
>
> *Մարթան Նրան ասաց. «Ես գիտեմ... նա հարություն պիտի առնի հարության ժամանակ՝ վերջին օրում»:*
>
> *Հիսուսը նրան ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը. ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի:*
>
> *Եվ ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի: Դու հավատո՞ւմ ես սրան»:*
>
> *Նա ասաց Նրան. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ Դու Քրիստոսն ես, Աստծո Որդին, որ աշխարհ*

պիտի գար»:

59 Ես ուզում եմ թեմայի համար օգտագործել այս երեք բառը՝ *Դու հավատո՞ւմ ես սրան:*

60 Որոշ ժամանակ առաջ ես մի պատմություն էի կարդում, կարծում եմ՝ դա հորինված պատմություն էր: Ենթադրում եմ ծառայողներից շատերը կարդացել են դոկտոր Ինգրեմի *«Իշխանը Դավթի տանից»* գիրքը: Հրաշալի գիրք է: Այն կարծեմ ամբողջովին դադարել են տպագրել: Ես կուզեի տպագրել այն, որպեսզի կարողանայի տարածել մարդկանց շրջանում:

61 Այդ գրքում ես փոքրիկ մի հոդված էի կարդում այս Ղազարոսի, Հիսուսի և Ղազարոսի քույրերի՝ Մարիամի ու Մարթայի վերաբերյալ: Եվ ես այնտեղ կարդում էի այն մասին, որ Հիսուսը ապրում էր, կարծեմ, Մարթայի և Մարիամի տանը: Նրանք երկուսն էլ հաճելի եբրայեցի աղջիկներ էին: Եվ Ղազարոսը սովորում կամ վարժվում էր եկեղեցում դպիր դառնալու, արտագրելով օրենքի տառերը քահանաների համար:

62 Եվ Հիսուսը հրաշալի հաղորդակցություն ուներ, հատկապես Ղազարոսի հետ: Երբ գրքում կարդում ենք այն մասին, որ Նա եկավ իրենց տուն, և Մարթան փոքր ինչ դանդաղկոտ էր Նրա Խոսքերն ունկնդրելու մեջ, բայց նա պետք է ճաշ պատրաստեր և սեղան գցեր, բայց Մարիամը նստեց Նրա ոտքերի մոտ: Եվ Հիսուսն ասաց, որ Մարիամը ավելի լավ բաժին էր ընտրել:

63 Իսկ հետո դոկտոր Ինգրեմի պատմության գրքերում պատմվածքի և… *«Իշխանը Դավթի տանից»* գրքում, մեզ պատմվում է այն մասին, որ Ղազարոսն էր, ով բերեց Հիսուսին Հովհաննեսի մոտ: Ամեն դեպքում, գուցե դա իրականությանը չի համապատասխանում, ես չգիտեմ, բայց ուղղակի որպես հիմք դրա համար, ենթադրվում է, որ Նա ապրում էր նրանց հետ:

64 Հիմա, մենք սա ուսումնասիրել ենք եկող, ավելի ճիշտ՝ անցյալ շաբաթ, որ Հիսուսն ասում է Հովհաննեսի Ավետարանի 5.19–ում. «Ես… Որդին Ինքն Իրենից ոչինչ չի կարող անել, այլ ինչ տեսնում է Հորն անելիս, այդ էլ Որդին է անում նույն ձևով: Հայրն անում է և Որդին էլ անում է առ այսօր»: Հասկանո՞ւմ եք: «Ինչ տեսնում է Հորն անելիս»:

65 Եվ այսպես, որպեսզի սրանից ճիշտ պատություն ստացվի, Հայրը՝ Աստված, պետք է որ խոսեր Իր Որդու՝ Հիսուսի հետ և ասեր. «Քո բարեկամ Ղազարոսը

մեռնելու է, բայց դա ի բարին է լինելու, ուստի լքիր այդ տունը: Հեռացիր, որովհետև Քեզ կխնդրեն, որ աղոթես նրան համար կամ բժշկես նրան, իսկ, իսկ Ես չեմ ուզում, որ Դու դա անես»: Եթե հետևեք պատմությանը, մինչ մենք առաջ ենք գնում, կտեսնեք, թե ինչպես է դա ձևավորվում հենց ճշմարտությանը դրա մասին: Այսպիսով, Հիսուսնը պարզապես առանց զգուշացնելու կամ նման բանի, հեռացավ տնից և ուրիշ տեղ գնաց, այդ գիշեր չվերադարձավ: Գնաց այլ քաղաքներ: Եվ հենց որ Հիսուսը լքեց տունը, այդժամ փորձանք եկավ:

66 Եվ երբ Հիսուսը լքում է ձեր տունը, փորձանքը գալիս է: Պարզապես հիշե՛ք՝ երբ Նա լքում է ձեր տունը, փորձանքը ճանապարհին է: Երբ դուք ստանում եք սոցիալական հասարակություն և նման բաներ, որը գործում է ձեր եկեղեցում նույնքան իդեալական, ինչպես մի մեծ տասնվեց մխոցանի «Ռիկենբեքեր», և Հիսուսին արհամարում եք դրանով, երբ Հիսուսը գնում է ձեր եկեղեցուց, փորձանքը սկսվում է: Այո՛, պարո՛ն, երբ Հիսուսը լքում է կազմակերպությունը, որ նրանք մի կող են դնում Նրան և ասում. «Դե, մենք հիմա ուղղակի չենք հավատում, որ այս բաները կարող են իսկապես ճիշտ լինել», և ուրիշ բան եք ընդունում, գալիս է փորձանքը: Պարզապես հիշե՛ք սա:

67 Դա ինձ հիշեցնում է մի պատմություն Տեր Հիսուսի մասին, որը գտնվում է Ղուկասի գրքում: Դուք գիտեք, որ երբ Նա ընդամենը մոտ տասներկու տարեկան տղա էր, Նրա ազգականները Նրան տարան, ինչպես սովորույթ էր ամեն տարի, Պենտեկոստեի տոնին: Եվ մինչ նրանք Երուսաղեմում էին՝ տոնին, և հրաշալի ժամանակ էին անցկացնում, մենք տեսնում ենք Աստվածաշնչում, որ երեք օր նրանք գնացին առանց Նրա: Եվ նրանք կարծում էին, որ գուցե, համարում էին, որ այդպես էլ պիտի լինի, որ Հիսուսը պետք է որ իրենց ազգականների մեջ լիներ: Հիմա, մենք չպետք է դա անենք: Երբ նրանք անցան իրենց ազգականների միջով, պարզվեց, որ Նա այնտեղ չէր:

68 Մենք էլ չպետք է համարենք, որ այդպես էլ պիտի լինի, որ միայն նրա համար, որ մեթոդականներ ենք, մկրտական ենք, երիցական ենք, հոգեգալստական ենք, և մեր անցյալը և մեր նախահայրերը մեծ հավատացյաներ են եղել, համարում ենք, որ, դե, այդպես էլ պիտի լինի, Հիսուսը մեզ հետ է: Մենք չպետք է այդպես վարվենք: Մենք պիտի ամեն օր և ամեն վայրկյան

հաղորդակցության մեջ լինենք Նրա հետ: Ո՛հ, ես սիրում եմ դա:

69 Ես ուզում եմ այն, ինչ Աստված հիմա է: Այն, ինչ իմ ծնողներն են ունեցել, ինչ իմ նախահայրերն են ունեցել հրաշալի է, բայց (այն, ինչ նրանք ունեցել են լավ է), ես կարծում եմ, որ մենք առաջ ենք գնացել:

70 Եկե՛ք տեսնենք, թե ինչպիսին է Նա այսօր: Ես չեմ ուզում հետ նայել և տեսնել, թե պարոն Մուդին ինչ է արել, որովհետև մենք ավելի առաջ ենք անցել, քան պարոն Մուդին: Մեր եկեղեցիների խնդիրը կայանում է նրանում է, որ մենք հետ ենք նայում և ասում ենք. «Դե, եկե՛ք տեսնենք, թե պարոն Ջոն Ուեսլեյն ինչ է ասել, թե ուրիշներից ոմանք ինչ են ասել»: Այդ է պատճառը, որ գիտությունը ավելի առաջ է գնացել իր բնագավարում, քան կրոնը:

71 300 տարի առաջ մի ֆրանսիացի գիտնական ապացուցել է, որ եթե դուք սլանաք ժամում երեսուն հինգ մղոն կայծակնային արագությամբ, ապա ձգողականության ուժը ձեզ կկտրի գետնից: Դուք կարծում եք՝ գիտնականներն այսօր կվկայակոչեի՞ն դա: Նրանք սլանում են ժամում տասնինը հարյուր մղոն արագությանբ և դեռ փորձում են ավելիին հասնել: Նրանք առաջ են ընթանում, առաջ են նայում: Բայց մենք ուզում ենք հետ նայել և տեսնել, թե Մուդին ինչ է ասել, Մենքին ինչ է ասել, Ֆինին ինչ է ասել, Նոքսին ինչ է ասել. նրանցից ոմանք: Այն, ինչ նրանք ասել են, շատ լավ էր: Դա իրենց ժամանակաշրջանի համար էր, բայց մենք գնում ենք առաջ:

72 Իմ պապը եզերի սայլ էր նստում: Ես «Ֆորդ» V8-եմ քշում: Իմ տղան ռեակտիվ ինքնաթիռով է թռնելու: Այսինքն մենք շարժվում են առաջ: Ահա, թե ինչպիսին պիտի լինի կրոնը: Տիրոջ գալուսը մոտ է: Եկեղեցին պետք է շարժվի առաջ՝ իր լիազորությունների մեջ: Գիտությունը կարող է միայն որոշակի բարձունքի հասնել իսկ հետո այն նվազում է, բայց մենք ունենք Աստծո անսահմանափակ զորության չօգտագործված աղբյուրներ, որոնց երբեք չեն դիպչել, որի մեջ մենք պետք է շարժվենք: Մենք միլիոնավոր մղոններով հեռու ենք ապրում մեր արտոնություններից այս երեկո, արտոնություններից, որ քրիստոնյաները պետք է վայելեն: Ես ինձ համար ամաչում են, երբ այստեղ նայում եմ դուրս և տեսնում եմ հաստատությունները,

հիվանդությունները և խնդիրները, որոնք տեղի են ունենում հիմա: Մեր եկեղեցին պետք է քայլեր փողոցով, բժշկելով հիվանդներին, հարություն տալով մեռելներին, դուրս հանելով դևերին, նշաններ ու հրաշքներ անելով՝ ողջ աշխարհին հասկացնելով, որ Հիսուս Քրիստոսը կենդանի է: Ահա, թե ինչ մենք պետք է անենք:

73 Դե, դուք ասում եք. «Պարոն Մուդին երբեք...»: Պարոն Մուդին չէր ապրում այս օրում: Դա ճիշտ է: Մենք ապրում ենք Տիրոջ գալստյան շուքի ներքո: Եվ մենք համարում ենք, որ այդպես էլ պիտի լիներ, որ Նա մեր ազգականների հետ էր: Բայց վերջերս երբ մի կրվառար մարտահրավեր նետեց պարոն Գրեհեմին, մենք պարզեցինք, որ Նա մեր բարեկամների շրջանում չէ:

74 Որտե՞ղ գտան Նրան: Որտե՞ղ, որտե՞ղ նրանք գտան Հիսուսին: Հենց այնտեղ, որտեղ թողել էին: Իսկ որտե՞ղ էին թողել Նրան: Պենտեկոստեի տոնին: Որտե՞ղ ենք մենք թողնում Հիսուսին, որտե՞ղ է եկեղեցին թողել: Պենտեկոստեի տոնին: Երբ մենք հեռանում ենք հին ժամանակների հոգեգալստական զորությունից և Պենտեկոստեի տոնից, հեռանում ենք Հիսուսից: Դա միանգամայն ճիշտ է, բարեկա՛մ: Մենք ապրում ենք մեր արտոնություններից ցածր: Այո՛, պարո՛ն:

75 Նրանք թողել էին Նրան Պենտեկոստեի տոնին, և միայն մեկ վայր կա, որտեղ մեթոդականները, մկրտականները, երիցականները և հոգեգալստականները կգտնեն Նրան, դա է՝ ետ դառնալ այնտեղ, որտեղ թողել եք Նրան: Որտե՞ղ է Տիրոջ ուրախությունը: Որտե՞ղ է Տիրոջ զորությունը: Եկեղեցին այսօր հարցնում է. «Ի՞նչ, ի՞նչ է պատահել պատմական Աստծուն»: Նա սպասում է Իր ժողովրդին, որ կանչի Նրան ասպարեզ: Բայց...

76 Մենք դա չենք կարող անել հարանվանությունների միջոցով: Մենք դա չենք կարող անել հոգեբանության ներքո: Մենք դա չենք կարող անել թվաբանության ներքո կամ մենք չենք կարող դա անել կրթության միջոցով: Մենք առանձնացնում, զատում ենք մեզ: Մենք բաժանված չենք: Մենք մեկ հոգի ենք, անկասկած, Հիսուս Քրիստոսի մեջ: Մենք բոլորս մեկ ենք Քրիստոսի մեջ, և մեր հարանվանությունները երբեք չեն անի դա: Որքան էլ լավը լինեն նրանք, չեն անի դա: Մեր կրթությունը ամենամեծ խոչընդոտն է, որը երբևէ Ավետարանն ունեցել է, կրթությունը:

77 Այն, ինչի կարիքը մենք ունենք, կրթությունը չէ: Մենք կարիք ունենք Սուրբ Հոգու զորության և դրսևորման վերադարձին եկեղեցի՝ զորությունը ցույց տալու համար: Հիսուսը երբեք չասաց. «Գնացե՛ք աշխարհով մեկ և, և սովորեցրեք»: Նա երբեք չասաց. «Գնացե՛ք աշխարհով մեկ և արեք...»: Նա ասաց. «Գնացե՛ք աշխարհով մեկ և Ավետարանը քարոզեցեք»: Իսկ Ավետարանը Սուրբ Հոգու զորությունը, հարությունը ցույց տալու համար է: Մենք դեռ միլիոնավոր մղոններ հետ ենք այնտեղից, որտեղ պիտի լինեինք: Եկե՛ք շարժվենք առաջ: Եկե՛ք հետ գնանք այնտեղ, որտեղ թողել ենք Նրան՝ Պենտեկոստեի տոնին:

78 Հիսուսն ասում է Հովհաննեսի, կարծեմ, 15-րդ գլխում, ասում է. «Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը»: Դե հիմա, եթե այդ Որթն առաջին ճյուղը տվեց և այդ ճյուղից գրվեց Գործք առաքելոց գիրքը, երկրորդ ճյուղը կստեղծի և-ս մի Գործք առաքելոց գիրք, երրորդ ճյուղը կստեղծի էլի մի Գործք առաքելոց գիրք: Եվ ամեն ճյուղ, որ դուրս է գալիս այդ Որթից նույնը կլինի ինչպես առաջին ճյուղն էր:

79 Հիմա, դուք կարող եք պատվաստել, մենք դա գիտենք: Ես տեսել եմ ցիտրուսային ծառ մոտ ութ տարբեր տեսակի բույսերով: Ես տեսել եմ նարնջենու վրա գրեյպֆրուտներ, կիտրոններ և նման բաներ, բայց դրանք պատվաստված էին:

80 Ահա, թե ինչն է խնդիրն այսօր: Մենք պատվաստվել ենք մեր գաղափարները, պատվաստել ենք մեր հարանվանությունները, բայց եթե այդ ծառն՝ ինքը երբևէ և-ս մեկ մրգատու որթատունք տա, այն կլինի սկզբնականների նման, որոնք կային նրա մեջ: Ալելո՛ւիա: Օ՛հ, եկեղեցին միախառնվելու է, բայց մենք բնօրինակի զորության կարիքն ունենք: Մենք Սուրբ Հոգու, Հիսուս Քրիստոսի հարուցյալ զորության կարիքն ունենք: Ահա, թե ինչ է Նա մեզ պատվիրել անել:

81 «Ես Որթն եմ, դուք՝ ճյուղերը»: Եթե խաղողի վազը բողբոջում է և նրա վրա գեղեցիկ կապույտ խաղողներ են հայտնվում, հաջորդ որթի վրա, որ նա կարձակի գեղեցիկ կապույտ խաղողներ կլինեն: Եթե առաջին Որթը դուրս եկավ, և նրանք ընկան Սուրբ Հոգու ազդեցության ներքո և մեծ հրաշքներ ու նշաններ գործեցին, և կնքեցին իրենց վկայությունը աշխարհի առջև... Նրանցից շատերը նույնիսկ իրենց սեփական վկայությամբ, իրենց արյունով կնքեցին իրենց վկայությունը: Նրանք ամեն տեսակի

վտանգների և նման բաների միջով անցան՝ Ավետարանը բերելու համար: Նրանք տառապեցին, նրանք ծեծվեցին, նրանք պատժվեցին: «Պե՞տք է, որ մեզ տանեն տուն՝ Երկինք ծաղկազարդ, անկաշկանդ մահճակալի վրա, մինչ ուրիշները պատերազմում էին մրցանակը շահելու համար, և անցան արյունոտ ծովերի միջով»: Ի՞նչ ենք մենք ակնկալում անել: «Ես պիտի մարտնչեմ, եթե պիտի թագավորեմ: Շատացրո՛ւ իմ քաջությունը, Տե՛ր»: Անկասկած: Մենք կարիք ունենք...

82 Մենք նոր հարանվանության կարիքը չունենք: Մենք նոր եկեղեցական շինության կարիքը չունենք: Այն, ինչի կարիքը մենք ունենք այսօր, հին ժամանկների անապատային, երկնագույն, մեղքը սպանող Պենտեկոստեի արթնությունն է, որ ծնվեց Պենտեկոստեի ժամանակ, և նորից վերադարձավ եկեղեցի, դարձյալ Սուրբ Հոգու զորությունը՝ Հիսուսին ասպարեզ բերելու համար:

83 Պատմական Աստվածը վճռական պահերին միշտ բարձրանում է ասպարեզ: Մենք դրա կարիքն ունենք: Ահա թե ինչում է խնդիրը մեր եկեղեցիների հետ այսօր: Մենք չափազանց շատ ենք հեռու անցել: Մենք ընկնում ենք աշխարհի նորաձևությունների մեջ: Եվ աստիճանաբար, տարեցտարի այն կամաց-կամաց սկսում է մահանալ և թառամել:

84 Շուտով կգա էտելու ժամանակը: Աստված կկտրի դա նույնքան հաստատ, ինչպես ես կանգնած եմ այս ամբիոնի մոտ: Աստված կէտի այն, որ պտուղ տա: Նա կկտրի աշխարհի բաները նրանից այս օրերից մեկում: Այնպիսի խայտառակություն է, այն, թե ինչպես է եկեղեցին վարվել կրոնի անվան տակ:

85 Եվ մենք պարզում ենք, որ երբ Հիսուսը հեռացավ, վրա հասավ մահը: Երբ Հիսուսը լքում է մեր եկեղեցին, Սուրբ Հոգու զորությունը լքում է մեր եկեղեցին, այն սկսում է նվազել և, և մահանալ: Եվ որոշ ժամանակ անց նրանից այլևս ոչինչ չի մնում: Հիմա, երբ Հիսուսը հեռացավ, վրա հասավ մահը: Օ՛հ, ինչ տխուր ժամանակ էր դա:

86 Եվ ուշադրություն դարձրե՛ք, նրանք տարակուսանքի մեջ էին, և ուղարկեցին Հիսուսի հետևից, բայց Նա չեկավ: Նորից ուղարկեցին Նրա հետևից, և Նա չեկավ, բայց Ինքը գիտեր, թե ինչ էր անելու: Նա այս երեկո գիտի, թե ինչ է անելու: Դա Նրա մոտ կորած չէ: Նա հստակ գիտի, թե

ինչ է անելու: Նա մի ժողովուրդ կբարձրացնի նույնքան հաստատ, ինչպես ես կանգնած եմ այս ամբիոնի հետևում: Նա հեթանոս սերունդից մի ժողովուրդ կբարձացնի Իր անվան համար: Նա կանի այդ:

87 Հրեաների ժամանակը մոտ է հիմա, և հեթանոսների ժամանակը մոտենում է իր ավարտին, որովհետև նրանք պարզապես դուրս են գալիս: Նրանք մերժում են Քրիստոսին, նրանք մերժում են իրենց նշանները, այն ամենը, ինչ կոչվում է բարեպաշտ, նրանք մերժում են, և դա պիտակավորում են որպես հեռազգացության ինչ–որ մի տեսակ կամ դիվային ուժ, և անում են... Նրանք հայհոյում են Սուրբ Հոգուն և իրենց կնքում են Աստծուց հեռու: Եվ Աստված կվերցի այն փոքրամասնությունը, որոշ ժամանակ անց, և այն կվերածի մի հզոր Եկեղեցու, իսկ հետո Հոգին կշրջվի դեպի հրեաները, և հեթանոս Եկեղեցուն կտանի տուն: Միանգամայն ճիշտ է: Այն հիմա շինվում է: Մենք գրեթե ժամանակների վերջում ենք:

88 Հիսուսը՝ Նա գիտեր: Եվ որոշ ժամանակ անց Նա ասաց. «Մեր բարեկամ Ղազարոսը քնած է»:

89 Դե, աշակերտները կարծեցին, թե նա մի փոքր հանգստանում է: Նա ասաց. «Դե, եթե նա քնած է, ուրեմն շատ լավ է»:

90 Դե, Նա ասաց Իր... իրենց բառերով, որ հասկանան, ասաց. «Նա մեռավ, և Ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի»: Հասկանո՞ւմ եք: «Ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի»: Որովհետև կխնդրեին Նրան, որ բժշկի, բժշկի նրան, բայց Ինքը գիտեր, որ չպիտի աներ դա, քանի որ հայտնությունը դեռ... այն չորս օրից հետո Նա իմացավ, որ դա այն ժամն է, որ Հայրն էր ասել Իրեն: Ի՜նչ գեղեցիկ է. Գերեզմանի մոտ Նա ասաց. «Հա՛յր, գոհանում եմ Քեզանից, որ Ինձ արդեն լսեցիր, բայց Ես սա ասում եմ այստեղ կանգնածների համար»: Հասկանո՞ւմ եք: Նա արդեն գիտեր, թե Ինքն ինչ էր անելու: Նա ասաց. «Գնում եմ նրան արթնացնեմ»:

91 Հիմա, ես պատկերացնում եմ, որ այդ փոքրիկ ընտանիքն իսկապես կոտրված էր: Կերակրողը մահացել էր, վիատություն: Օ՛հ, դա հրաշալի է, երբ դու տխուր տուն կամ սիրտ ունես, իսկ հետո հանկարծակի հայտնվում է Հիսուսը, այդպես չէ՞: Պատկերացնում եմ Մարթային՝ գեղեցիկ փոքրիկ կին սև քողը դեմքին, և փոքրիկ Մարիամին, և նրանք իրար բռնած՝ ասում են. «Ի՞նչ ենք անելու: Հայրիկն ու մայրիկը մահացան, և մեր

թանկագին եղբայրը… Մենք թողեցինք եկեղեցին, և մեզ հեռացրեցին նրանցից, և դուրս եկանք՝ Նազովրեցի Հիսուսին հետևելու համար: Իսկ Նա հեռացավ ինչ-որ տեղ և թողեց մեզ»:

92 Պատկերացնում եմ, թե քննադատն ինչպես է գալիս և ասում. «Հե՛յ, որտե՞ղ է այդ աստվածային Բժիշկը, այդ գալիլեացի Մարգարեն: Ո՞ւր է Նա հիմա: Տեսնո՞ւմ եք, երբ եկավ Նրա իսկական ժամանակն ինչ-որ բան անելու, Նա գնաց»: Ահա՛, խնդրեմ: Տեսնում եք, Աստված պարզապես սիրում է դա անել, պարզապես թողնել մարդկանց, պարզապես ցույց տալ մարդկանց, թե ով են իրենք, այո՛, պարզապես փորձում է նրանց, որ տեսնեն, թե իրականում ով են իրենք: Նա օրհնություն է տալիս նրանց: Նա հայտնվում, ցույց է տալիս Իրեն, ներկայացնում է Իրեն մարդկանց պարզապես, որ տեսնի, թե ինչպես են նրանք արձագանքելու, պարզապես, որ տեսնի, թե ինչ են նրանք անելու այդ հարցում:

93 Հիմա, մենք տեսնում ենք, որ մի քանի օր, չորս օր հետո խեղճ Ղազարոսը մահացավ: Նրանք թաղեցին նրան: Երկրորդ, երրորդ, չորրորդ օրը… Հիմա, ցանկացած մարդ գիտի, որ երեք օրից հետո սկսվում է քայքայումը՝ առաջինը դեմքի վրա քիթն է փոս ընկնում: Իսկ հետո սկսվում է քայքայումը՝ մաշկի տակի որդերը սկսում են ուտել մարմինը: Նրանք թաղեցին նրան և քարայրի վրա մի մեծ քար դրեցին, ուր մեռյալն էր դրված: Եվ ժամանակ առ ժամանակ երիտասարդ աղջիկները գնում, ծնկի էին գալիս գերեզմանի մոտ և լաց էին լինում:

94 Որոշ ժամանակ անց լուրեր տարածվեցին. «Հիսուսը եկել է: Մենք տեսել ենք Նրան քաղաք մտնելիս»: Օ՜հ, այդ փոքրիկ Մարթան, որ կարծես թե այնքան դանդաղկոտ էր այդ հարցում, այդ անգամ ապացուցեց, թե ինչ խմորից էր պատրաստված: Ահա, նա գալիս է: Ճանապարհի վրա է դուրս գալիս, վազելով գնում է փնթրելու: Պատկերացնում եմ, թե ինչպես են մի քանիսը ճանապարհին ասում. «Դե, կարծում եմ, որ դու հիմա համոզվեցիր, որ քո կրոնը կեղծ է»: Նա պարզապես անտեսում էր նրանց և գնում էի առաջ, անցավ բոլոր քննադատների կողքով: Նա գնաց մինչև տեսավ Նրան, Ով գուցե փողոցի անկյունում նստած էր:

95 Հիմա, ըստ երևույթին, նա պետք է… գուցե նա իրավունք ուներ նախատել և, և կոպիտ խոսել Նրա հետ: Նա չվազեց և չասաց. «Լսի՛ր, լսի՛ր, Դո՛ւ: Դու սահմանված

ես լինել Մարգարե, Աստծո Մարդ: Ինչո՞ւ Դու չեկար, երբ Քեզ կանչեցինք: Մենք հիմա քաղաքի ծաղրի առարկան ենք դարձել: Մենք մեր եկեղեցուց դուրս եկանք՝ Քեզ հետևելու համար»: Թվում է, թե նա իրավունք ուներ: Բայց դուք գիտեք՝ ինչպես ես քարոզեցի *«Գառնուկն ու Աղավնին»* թեմայով, եթե մենք գառնուկ ենք, գառնուկը հրաժարվում է իր ունեցած ամեն իրավունքից: Դա միանգամայն ճիշտ է: Նա բրդից բացի ոչինչ չունի, դրա համար ստիպված է դրանից էլ հրաժարվել: Դուք էլ հրաժարվեք ձեր ունեցած ամեն իրավունքից՝ Աստծուն ծառայելու համար: Դա լիովին ճիշտ է:

96 Ես հարցակվում էի կանանց վրա այդ գարշելի հագուստները կրելու պատճառով, գիտեք, և նրանք ասում էին. «Դե, մենք, մենք ամերիկացի ենք: Մենք կարող ենք անել ինչ որ ուզում ենք»:

97 Ես ասացի. «Դա լիովին ճիշտ է, բայց եթե դուք գառնուկ եք, կհրաժարվեք ձեր իրավունքներից»: Ծխախոտ ծխելը և այսպես վարվելը, դա վատարագույն բան է, որ կինը երբևէ արել է: Դա միանգամայն ճիշտ է:

98 Վերջերս մի կին զրույցի ընթացքում ասաց ինձ, ասաց. «Բայց եղբայր Բրանհամ ուրիշ տեսակի հագուստ չեն արտադրում»:

99 Ես ասացի. «Բայց դեռևս կարի մեքենաներ արտադրում են, և կտորեղեն վաճառում են: Դրա համար ոչ մի արդարացում չկա»: Դա միանգամայն ճիշտ է:

100 Հիշե՛ք մի օր, այստեղ դուք կարող է ձեր ամուսնու առջև մաքուր լինեք, բայց դուք պատասխան եք տալու շնության համար, քանզի հաստատ. «Ով մի կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն իր սրտում շնություն է արել նրա հետ»:

101 Ինչո՞ւմ է խնդիրը մեր այսօրվա հոգեգալստական կանանց հետ, սա է ինձ զարմացնում: Ինչքան եք դուք հին տաշված գծից դուրս եկել: Ինչպես էին ձեր մայրկները մի ժամանակ երկար մազեր կրում, իսկ այսօրվա հոգեգալստական կանայք ներկվում են Մարդի Գրասի ամբոխի նման, կտրումեն են իրենց մազերը և այդպիսի կարճ կատճատաբատներ են կրում մյուսների նման... դուրս են գալիս և կեսօրին հնձում են խոտը, երբ տղամարդիկ անցնում են կողքով, դու գիտակցո՞ւմ ես, կին, որ պատասխան ես տալու այդ տղամարդկանց հետ շնություն կատարելու համար: Դու քեզ նրանց

ներկայացրել ես այդ նպատակով: Դա չար ոգին է եկեղեցու և մարդկանց վրա, և նրանք չգիտեն դա: Կույր են և չգիտեն այդ մասին: Դա ճշմարտություն է:

102 Գուցե դուք կարող եք ասել, որ ես՝ որպես ավետարանիչ իրավունք չունեմ դա ասելու: Դե, ես, ես պիտի հետևեմ Սուրբ Հոգու առաջնորդությանը. դա է այն ամենը, ինչ ես կարող եմ ասել: Դուք... Եթե դատաստանի ժամանակ ես ձեզ հանդիպեմ, այդժամ ես ստիպված չեմ լինի կրել ձեր արյունն իմ ձեռքերի վրա: Հեռացե՛ք հողի ամեն մի թիզից, որ նման է սատանայականի: Հեռու մնացե՛ք դրանից: Հեռացե՛ք դրանից: Ինձ չի հետաքրքրում, թե քանի հեռուստաաստղեր... Դուք այստեղ հեռուստաաստղ չեք, դուք Աստծո դուստրն եք:

103 Վերջերս առավոտյան մի հովվի եկեղեցում քարոզում էի ծեր ստրուկի մասին, այն ժամանակների, երբ ստրուկներ էին վաճառում: Եվ նրանք գալիս և աճուրդին գանում էին նրանց: Եվ մարդիկ, նրանք լացում, ողբում էին իրենց հայրենիքի համար. նրանք այլևս հետ չէին գնա: Նրանց ստիպված էին մտրակել: Նրանց գնում էին այնպես, ինչպես դուք կգնեիք մեքենա, պարզապես ցանկացած գնով, և վաճառում էին մարդ արարածին:

104 Մի օր մեծ հիմն... ավելի ճիշտ՝ մեծ պլանտացիա մի գնորդ՝ միջնորդ է գալիս: Եվ նա ասում է. «Քանի՞ ստրուկ ունեք վաճառքի»:

105 Ասում է. «Դե, փոխանակման համար մի քանի հոգի ունեմ»: Նրանք աշխատում էին խոշորներին ձեռք բերել: Վերցնում էին այդ մայրերին, հայրերին... Եթե կինը, որի հետ նա ամուսնացած էր, փոքրիկ հիվանդոտ էր լինում, վերցնում էին այդ խոշոր առողջ տղամարդկանց և բուծում էին նրանց... ձիերի և կենդանիների նման: Երբեք ճիշտ չի եղել: Աստված ստեղծեց մարդուն, իսկ մարդը՝ ստրուկներին: Դա սկզբից ի վեր ճիշտ չի եղել, երբեք: Աստված երբեք մտադիր չի եղել, որ որևէ մարդը ստրուկ լինի: Ո՛չ, պարո՛ն: Եվ ոչ... Տեսե՛ք, թե ինչ եղավ:

106 Հետո այդ ամենի մեջ այս մարդն ասում է. «Դե, ես կուզենայի նրանցից մեկին գնել...»: Նա այնտեղ նկատեց երիտասարդ մի տղայի: Նրան մտրակելու կարիք չկար: Նրա կզակը, գլուխն իսկական ջենտլմենի նման բարձրացած էր վեր, քայլում էր: Այդ միջնորդն ասում է. «Ես կուզեի նրան գնել»:

107 — Բայց նա չի վաճառվում:

108 — Ինչո՞ւ,— հարցրեց նա,— ի՞նքն է ավագը։

109 — Ո՛չ, նա ստրուկ է։

110 — Դե,— ասաց նա,— ինչո՞ւ։ Նրան ավելի լավ եք կերակրում, քան մնացածներին։

111 — Ոչ։ Նա ուտում է այնտեղ՝ խոհանոցում մնացածների հետ միասին։ Նա ստրուկ է։

112 — Ի՞նչն է նրան այդքան տարբերում մնացածներից։

113 Եվ վերակացուն ասում է. «Երկար ժամանակ ես ինքս էլ էի ուզում իմանալ, բայց մի օր պարզեցի։ Այնտեղ՝ հայրենիքում նրա հայրը ցեղի թագավոր է։ Եվ չնայած նա օտարական է, հեռու իր տանից, նա սակայն գիտի, որ թագավորի տղա է և իրեն պահում է նրա նման։ Եթե դա... Եթե աֆրիկայի բնիկը կարողացավ գիտակցել, որ նրա հայրը թագավոր է, և այստեղ՝ օտար երկրում գտնվելով որպես օտար մեկը, գիտի, որ ծովի այն կողմում նա թագավորի տղա է, ուրեմն ինչպե՞ս պետք է կանայք և տղամարդիկ իրենց պահեն, երբ դուք Աստծո որդիներ և դուստրեր եք։ Այդպես վարվե՛ք։ Անկասկած։ Պահե՛ք ձեզ. մաքրվեցե՛ք և գործե՛ք Աստծո որդիների ու դուստրերի նման։ Զարմանալի չէ, նման վիճակը։

114 Ահա, խնդրեմ։ Օ՛հ, փոքրիկ Մարթան վազելով գնաց դուրս։ Թվում էր, թե նա մի միջոց կգտնի ինչ-որ բան ասել Նրա դեմ։ «Ինչո՞ւ Դու չեկար եղբորս մոտ»։ Տե՛ս, թե մենք ինչ էինք արել քեզ, իսկ դու մեզ հիասթափեցրիր»։ Դե, եթե նա դա ասած լիներ, պատմությունն երբեք չէր ավարտվի այնպես, ինչպես ավարտվեց։ Ո՛չ, պարո՛ն։ Ամբողջ գործը կայանում է նրանում, թե դուք ինչպես եք մոտենում աստվածային բժշկության պարգևին։ Եթե Աստված պարգև է ուղարկում, դուք պետք է ճիշտ մոտենաք դրան։ Եթե դուք ակնկալում էք որևէ բան ստանալ դրանից, պետք է ճիշտ մոտենաք դրան։ Եվ Մարթան գիտեր դա։ Նա, հավանաբար, կարդացել էր սունամացի կնոջ և իր երեխայի մասին։ Եվ նա... Եթե այդ սունամացի կինը գիտեր, որ Աստված էր Եղիսեի մեջ, որքա՞ն ավելին էր Նա Հիսուսի մեջ։ Անկասկած։

115 Եվ այսպես, նա եկավ ճիշտ մոտեցմամբ։ Վազեց և ընկավ Նրա ոտքերի մոտ։ Ինձ դա դուր է գալիս։ Ընկավ Նրա ոտքերի մոտ և ասաց. «Տե՛ր...»։ Դա Նրա ճիշտ տիտղոսն է։ Ահա, թե ով էր Նա։ Նա իր Տերն էր։ «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, եղբայրս չէր մեռնի»։

116 Ո՛հ, Աստված իմ: Օ՛հ, ես պարզապես կարող էի պատկերացնել Նրա մեծ սիրտը, երբ նայում էր այդ գեղեցիկ կնոջը, արցունքները հոսում էին նրա այտերով: Ասաց. «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, եղբայրս չէր մեռնի»: Տեսե՛ք, թե ինչ ասաց նա. «Բայց նույնիսկ հիմա, Տե՛ր, թեև նա մահացած է, թեև մաշկի որդերը սողում են նրա մարմնի միջով, նույնիսկ հիմա, Տե՛ր, Դու ինչ որ Աստծուց խնդրես, Աստված կտա Քեզ»:

117 Ո՛հ, դա է գաղտնիքը: Դուք կարող եք ասել. «Ես բոլոր հիվանդանոցներով անցել եմ: Բժիշկն ասում է, որ ես կմեռնեմ, բայց նույնիսկ հիմա, Տե՛ր... Ես ամբողջովին բռնված եմ արտրիտով. ես չեմ կարողանում շարժվել, բայց նույնիսկ հիմա, Տե՛ր...»:

118 Անցած երեկո այդ փոքրիկ երեխայի մոտ *այդպիսի* մեծ գլխի ջրակալում էր: Ոչինչ չես կարող անել: Այն կուռեր և ցրիվ կտար նրա փոքրիկ գլուխը և կմեռներ. «Բայց նույնիսկ հիմա, Տե՛ր...»: Նա միշտ նույն Աստվածն է: Նա միշտ նույն Տերն է: «Նույնիսկ հիմա, Տե՛ր...»: Են Նա նստած է Ամենակարող Աստծո աջ կողմում, բարեխոսելով այն բաների հիման վրա, որ մենք պնդում ենք, որ Ինքն արել է մեզ համար:

119 Հիմա, ես մեծ կրոնական ոգեշնչում եմ զգում: Իհարկե, զգում եմ: Մեկ է դուք ինձ հիմա «սուրբ թռչկոտող» կանվանեք, ուստի կարող եք սկսել և ավարտել դրանով:

120 Այնպես որ, այո՛, պարո՛ն, «նույնիսկ հիմա, Տե՛ր, Դու ինչ որ Աստծուց խնդրես, Աստված դա կանի»:

121 «Ինչ որ խնդրեք Հորից Իմ Անունով, Ես դա կանեմ»,— ասել է Հիսուսը:

122 «Նույնիսկ հիմա, Տե՛ր, Դու ինչ որ խնդրես, Աստված կտա Քեզ»: Ո՛հ, դա պետք է որ տակնուվրա արած լիներ Իր մեծ սրտը:

123 Հիսուսն ասաց. «Քո եղբայրը հարություն կառնի»:

124 Նա ասաց. «Այո՛, Տե՛ր: Նա կապրի: Նա լավ տղա էր: Նա ընդհանուր հարության ժամանակ՝ վերջին օրը, կելնի»: Այն հրեաները հավատում էին ընդանուր հարությանը: «Նա հարության ժամանակ՝ վերջին օրերում, կելնի»:

125 Նայե՛ք Նրան: Նա հավաքեց Իր փոքրիկ սեփական անձը: Նա ասաց. «Ես եմ Հարությունը և Կյանքը»: Ո՛հ, Աստված իմ: Ոչ մի մարդ նախկինում չէր կարող դա ասել: Դրանից հետո էլ չի լինելու մեկը, ով կարողանա դա ասել:

Նա միակն է, Ով կարող է դա ասել։ «Ես եմ Հարությունը և Կյանքը»,— ասաց Տերը։ «Ինձ հավատացողը թեև մեռնի, պիտի ապրի։ Եվ ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի։ Հավատո՞ւմ ես սրան»։

126 Նա պատասխանեց. «Այո՛, Տե՛ր»։ Ո՛հ, նա գիտեր, որ ինչ–որ բան է կատարվելու։ Պետք է կատարվեր։

127 Երբ անկեղծ սրտից հավատքը հանդիպում է Աստծուն, այդ ժանանվակները պարզապես *այդպես* հագնում են իրար։ Ինչ–որ բան պետք է կատարվի։ Ես կոչ եմ անում այս լսարանին այս երեկո Հիսուս Քրիստոսի Անունով, թող ձեր հավատքը այդպես կապվի Աստծո հետ, մի քանի րոպեից մենք ևս մի Պենտեկոստե կունենանք։ Այս քաղաքում այնպիսի արթնություն կլինի, որ քաղաքում բավական ոստիկաններ չեն լինի նրանց պահելու համար։ Դա ճիշտ է։ Իսկական արթնություն կլինի։ «Նույնիսկ հիմա, Տե՛ր...»։

128 «Դե, Տե՛ր, մեզ արդեն բռնել են *դրանում*, մենք *այս* ենք արել և *այն* ենք արել»։ Ինձ չի հետաքրքրում, թե դուք ինչ եք արել։ «Նույնիսկ հիմա, Տե՛ր...»։ Նա սպասում է, որ դու կանչես Իրեն։ Նա... «Դու հավատո՞ւմ ես սրան»։ Իհարկե։ Այո՛, պարո՛ն։ «Նույնիսկ հիմա Դու ինչ որ Նրանից խնդրես...»։

129 «Որտե՞ղ եք դրել նրան»։ Նա գնաց դեպի գերեզման։ Նա բավական չափով մարդ էր, որ լացեր. Նա բավական չափով Աստված էր՝ հարություն տալու համար։

130 Վերջերս այստեղ մի կին, որը պատկանում է որոշակի խմբի մարդկանց... Ես երբեք սովորություն չեմ դարձնում հիշեցնել հարանվանությունների մասին։ Բայց այս կինը... Նրանք չեն հավատում, որ Հիսուսն աստվածային էր։ Նրանք ասում են, որ Նա պարզապես մարգարե էր։ Հիմա, Նա... Եթե Նա պարզապես մարգարե էր, ուրեմն մենք բոլորս մեղքի մեջ ենք։ Կամ Նա Աստված էր, ոչ պակաս, քան Աստված էր, կամ էլ ամենամեծ սուտասանը, որն աշխարհն երբևէ ունեցել է։ Դա ճիշտ է։ Նա ավելին էր, քան մարդը։ Նա ասաց. «Նա աստվածային չէր»։

131 Այսօր այնքան շատ կա դրանից այս հասարակական ավետարանում. փորձում են Հիսուս Քրիստոսին մարգարե դարձնել։ Դե, Նա մարգարեների Աստված էր։ Անշուշտ, Նա էր։

132 Նա ասաց. «Ես ձեր կապացուցեմ ձեր Աստվածաշնչի միջոցով, որ՝ «Նա պարզապես մարդ էր»:

133 Ես ասացի. «Արե՛ք դա»:

134 Եվ նա ասաց. «Երբ Նա գնաց Ղազարոսի գերեզմանի մոտ, Աստվածաշունչն ասում է՝ «Նա լաց եղավ»: Նա պիտի մահկանացու լիներ, այլապես չէր կարողանա արտասվել»:

135 Ես ասացի. «Տիկին, դա՞ է ձեր սուրբգրային հատվածը»: Ես մտադրություն չունեմ այստեղ հայհոյություն անելու՝ դա ասելով, բայց ես ձեզ կասեմ, թե ինչ ասացի նրան:

136 Նա ասաց. «Դա է»:

137 Ես ասացի. «Այդ պնդումն ավելի թույլ է, քան սովից սատկած հավի ստվերից պատրաստված արգանակը»: Ես ասացի. «Դե, դուք, դուք չունեք մի բան, որի վրա կարողանաք հիմնվել»:

138 — Չէ՞որ Նա լաց եղավ: Դա ցույց էր տալիս, որ Նա մահկանացու է:

139 — Նա և՛ մահկանացու էր, և՛ անմահ: Նա Աստված էր մարմնում:

140 — Ո՛հ, անհեթեթություն է:

141 Ես ասացի. «Նա արտասվելով էր գնում գերեզման»: Դա լիովին ճիշտ է, բայց երբ Նա ուղղեց Իր սեփական անձը...»: Աստվածաշունչն է ասում. «Ո՛չ մի տեսք չկար, ո՛չ էլ գեղեցկություն, որ Նրան ախորժեինք»: Բայց երբ Նա ուղղեց այդ փխրուն ուսերը և ասաց. «Ղազարո՛ս, դո՛ւրս արի», և մի մարդ, որ արդեն չորս օր մեռած և գերեզմանի մեջ նեխած էր, դուրս եկավ: Դա ավելին էր, քան մարդը: Ցույց տվեք ինձ մի մարդու, ով ի զորու է դա անել: Ի՞նչ էր դա: Քայքայումը ճանաչում էր իր Տիրոջը: Կյանքը ճանաչում էր իր Արարչին: Ինչ–որ բան պետք է կատարվեր: Նա ասաց և մարդ, որ մեռած էր և չորս օր գերեզմանի մեջ էր, հարություն առավ, ոտքի ելավ և ապրեց: Ալելո՛ւիա: Դա Աստված էր Իր Որդու մեջ: Այո՛, պարո՛ն: Դա Աստված էր, Ով հայտնում էր Իրեն Նրա՝ Որդու միջոցով: Դա Աստված էր խոսում, ոչ թե մարդը:

142 Նա մարդ էր, երբ այն օրը նայեց շուրջն այն ծառի վրա՝ մի բան ուտելու համար: Դա մարդ էր: Բայց երբ Նա հինգ հացաբլիթն ու երկու ձուկն առավ և կերակրեց հինգ հազար հոգու, դա ավելին էր, քան մարդը: Դա Աստված

էր կերակրում նրանց այնտեղ: Նա ավելին էր, քան մարգարե, ավելին էր, քան մարդը: Նա Աստված–Մարդ էր: Անկասկած:

143 Նա այդ գիշեր պառկած էր այդ փոքրիկ նավակի ետևի կողմում, և ծովն աղմկում և տարուբերում էր 22ի փականի նման այնտեղ՝ այդ հզոր ծովի մեջ, երբ տաս հազար ծովային դևերն երդվել էին, որ այդ գիշեր խորտակելու են Նրան: Նա մարդ էր, թուլացած և հոգնած հիվանդների համար աղոթելուց, այնտեղ՝ ետևի կողմում պառկած էր. և քամին նույնիսկ չէր անհանգստացնում Նրան: Նա մարդ էր, երբ քնած էր, բայց երբ արթնացավ, Իր ոտքը դրեց նավակի պարանի վրա, նայեց վերև ու ասաց. «Խաղաղվի՛ր, հանդարտվի՛ր», և քամիներն ու ալիքները հնազանդվեցին Նրան, դա ավեին էր, քան մարդը: Դա Աստված էր մարդու մեջ, որ ճանաչեցնում էր Իրեն: Դա ճիշտ է:

144 Նա մարդ էր խաչի վրա, երբ աղաղակեց ողորմության համար: Երբ Նա աղաղակեց և ասաց. «Ծարավ եմ», դա մարդ էր: Երբ Նա մեռավ, Ինքը մարդ էր, բայց Զատկի առավոտյան, երբ մահվան, դժոխքի և գերեզմանի կնիքները կոտրեց և հարություն առավ, Նա ավելին էր, քան մարդը: Դա հայտնված Աստված էր: Զարմանալի չէ, որ բանաստեղծն ասում է.

Ապրելով ինձ սիրեց, մեռնելով ինձ փրկեց,
Թաղվելով իմ մեղքերը տարավ շատ հեռու,
Հարություն առնելով արդարացրեց ձրի ընդմիշտ,
Մի օր Նա պիտի գա, օ՛հ, փառավոր օր:

145 Նա ասաց. «Որովհետև Ես ապրում եմ, դուք նույնպես պիտի ապրեք: Հավատո՞ւմ ես դրան»: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Հավատո՞ւմ եք դրան: Ես հավատում եմ, որ Սուրբ Հոգին հիմա այստեղ է: Հավատո՞ւմ եք դրան: Ես հավատում եմ, որ Նա կլցնի մեզ Իր ներկայությունով: Հավատո՞ւմ եք դրան: Ես հավատում եմ, որ Սուրբ Հոգին ուզում է հեղել Իր ներկայությունը, բժշկել բոլոր հիվանդներին, լցնել բոլոր մարդկանց, ովքեր չունեն Սուրբ Հոգին: Հավատո՞ւմ եք դրան: Հավատո՞ւմ եք ձեր ամբողջ սրտով: Եկե՛ք վեր կենանք և փառք տանք Նրան: Ես հավատում եմ, որ Նա հենց հիմա կիջնի մեր վրա:

146 Ո՛վ Տեր Աստված, երկնքի և երկրի Արարիչ, հավիտենական կյանքի Հեղինակ, բոլոր բարի

պարգևների Ծնորհող, մենք «Հավատում ես դրան», Տե՛ր: Մենք հավատում ենք, որ Դու ես այստեղ՝ այս հավաքույթում: Մենք հավատում ենք, որ դա Դու ես օրհնում մեր անձերը: Մենք հավատում ենք, որ դա Դու ես հեղում Քո Հոգին մեր վրա: Մենք հավատում ենք, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան: Մենք հավատում ենք, որ Դու հավիտյան կենդանի ես և մեր անունները գրված են Գառան Կյանքի Գրքում: Բոլոր երկինքներն ու երկիրը կանցնեն, բայց մենք հավիտյան կապրենք, որովհետև Դու ապրում ես հավիտյան: Դու ես խոստացել դա մեզ: Մենք հավատում ենք դրան ողջ սրտով: Մենք հավատում ենք դրան ողջ էությամբ, Տե՛ր: Ես սիրում եմ Նրան, ես սիրում եմ Նրան:

147 Հավատո՞ւմ եք Նրան: Ես հավատում եմ, որ դա Սուրբ Հոգին է: Ինչ-որ բան է իջնում մեր վրա: Հավատո՞ւմ եք դրան: Ես հավատում եմ, որ Նա ուզում է հենց հիմա բժշկել ամեն մարդու: Հավատո՞ւմ եք դրան: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը դեպի Նա: Վեր կացե՛ք: Հավատո՞ւմ եք դրան: Սուրբ Հոգին այստեղ է: Սա Այդ է: Պետրոսն ասում է. «Սա Այդ է»: Սա Նա է, Սուրբ Հոգին է:

148 Ո՛վ Տեր, երկնքի և երկրի Արարիչ, ուղարկի՛ր Քո զորությունը, Քո օրհնություններն ու Քո ողորմածությունը այս մարդկանց վրա, և օրհնի՛ր իրենց սրտերը, ու տեսնել տուր նրանց, որ մարդու Որդին հավիտյան կենդանի է: Ծնորհի՛ր դա, ո՛վ Տեր: Մենք նրանց ներկայացնում ենք Քեզ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու Անունով:

149 Ցանկացած մարդ, ով չունի Սուրբ Հոգին, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը և փառք տվեք Աստծուն: Ես հավատում եմ, որ Նա կիջնի ձեր վրա: Ինչ-որ մեկը դրեք ձեր ձեռքերը նրանց վրա: Սա է ժամը: Ինչո՞ւ էլի սպասենք: Սա է ժամանակը: Սա է Պենտեկոստեի համար ժամանակը, վերադարձ դեպի Աստված: Ուղղե՛ք հարաբերություններն Աստծո հետ, հիսունականնե՛ր: Շարժե՛ք ձեր սիրտը կենդանի Աստծո զորությամբ: Թող Նրա Հոգին մտնի ձեր մեջ, ողողելով ձեր անձերը: Նա ամեն գիշեր այստեղ է, այստեղ՝ բժշկելու հիվանդներին, տեսողություն տալու կույրերին, հզոր և զորավոր զորության միջոցով Նա ապացուցում է Իրեն, որ հավիտյան նույնն է: Ալելուիա՜:

150 Փառք տվեք Նրան: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը: Մոռացե՛ք, թե որտեղ եք գտնվում. պարզապես իմացեք,

որ դուք Նրա կողքին եք, և՛ Նրա բարությունը, և՛ Նրա փառքը, և՛ Նրա զորությունը, և՛ Նրա ողորմությունը հավիտյան են: Նա հավիտյան նույնն է: Օրհնյա՛լ լինի Տիրոջ Անունը: Ալելո՛ւիա: Ո՛հ, փառք Նրա Սուրբ Անվանը:

151 Ո՛հ, որքան հրաշալի, որքան հզոր է Նա: Քանի՞սն են ուզում իրենց կյանքերը նորից ընծայել Աստծուն հիմա: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Քանի՞սն են ուզում իրենց կյանքերը ընծայել Աստծուն: Ահա այսպես: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը: Եկե՛ք տեսնենք Պենտեկոստեն: Եկե՛ք տեսնենք Աստծո ժողովրդին: Ես բարձրացնում եմ ձեռքս. «Տե՛ր, ահա ես, ինձ ուղարկիր»: Ուրեմն վերցրո՛ւ զոհասեղանի ածուխներով հրեշտակին և ուղարկիր Քո զորությունը մեզ վրա, Տե՛ր: Ո՛վ Աստված, շնորհի՛ր դա Քո Հոգու լեցունությամբ, ո՛վ Հայր: Լսի՛ր մեր աղոթքը, ո՛վ Տեր: Լսի՛ր մեր աղոթքը որպես հավատացյալ զավակների, ովքեր կանգնել են: Փառք Իր անվանը:

152 Ո՛հ, կարծես թե փառքի ալիքներն են թափվում, ո՛հ, ողորմության ցողի կաթիլները: Ո՛հ, փառք Աստծուն: Թող մեր անձերը սպասեն: Հավատո՞ւմ եք դրան: Հավատո՞ւմ եք դրան: Սա Սուրբ Հոգին է, որ գալիս է: Սա այն անտեսանելի ուժն է, որ մղում է մեզ Աստծո թագավորության մեջ, Պենտեկոստեի օրհնությունները: Վերադարձե՛ք տուն: Ձեզանից ակնկալվում է, որ կվերադառնաք տուն: Դուք թանկագին ժողովուրդ եք: Աստված ուզում է, որ դուք ինքներդ ձեզ նվիրաբերեք: Կանա՛յք, մաքրվեցե՛ք: Տղամարդի՛կ, մաքրվեցե՛ք: Եկե՛ք ետ դառնանք Աստծուն և ծառայենք Նրան իսկապես մաքուր սրտով:

153 Փառք Աստծուն, Սուրբ Հոգին հավաքույթում է: Պարզապես արե՛ք այն, ինչի առաջնորդությունն եք զգում: Պարզապես թույլ տվեք, որ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա: Ես ոչինչ չեմ կարող ասել: Ես ուղղակի չգիտեմ, թե ինչ ասեմ հիմա: Սուրբ Հոգին պարզապես ամբողջ շենքում է: Օրհնյա՛լ լինի Տիրոջ անունը: Փառք Տիրոջը: Ո՛հ, ալելո՛ւիա: Ալելո՛ւիա: Փա՛ռք Տիրոջը: Գոհությո՛ւն մատուցեք Տիրոջը: Ինչքան հրաշալի, ինչքան փառավոր... Ինչքան գեղեցիկ, ինչքան հրաշալի են սուրբերի փառաբանությունը ձեր դեմքերին, Սուրբ Հոգու ներկայության մեջ, որ այստեղ շարժվում և ցույց է տալիս մեզ Իր փառքը այս մեծ բազմությունից միաբանության մեջ, որ փառաբանում է Իր Անունը:

154 Ծրջվեք և սեղմեք ինչ-որ մեկի ձեռքը, ասեք. «Փառք

Տիրոջը, եղբայր: Փա՜ռք Տիրոջը, քույր»: Եկե՛ք մտնենք և թույլ տանք, որ Աստված շարժի մեզ: Փա՜ռք Տիրոջը: Դա ճիշտ է: Դուք բոլորդ՝ մեթոդականներ, մկրտականներ, երիցականներ, հոգեգալստականներ և յոթերորդ օրվա ադվենտիստներ, ով էլ որ լինեք, սեղմեք միմյանց ձեռքը Տեր Աստծո ներկայության մեջ: Ահա այդպես: Ո՛հ, ալելուիա: Ալելո՜ւիա: Ալելո՜ւիա: Ո՛հ, ես այնքան ուրախ եմ, որ նրանցից մեկն եմ: Ես այնքան ուրախ եմ: Ո՛հ, քանդելով պատերը, նետելով կեղտը: Փա՜ռք: Տիրոջ մեջ ազատություն է, փառաբանելով Նրա սուրբ Անունը... Օրհնյա՛լ լինի Տիրոջ Անունը: Ո՛հ, ալելուիա: Փառք Աստծուն:

155 Ո՛հ, ինձ պարզապես դուր է գալիս տեսնել դա՝ մարդիկ սեղնում են միմյանց ձեռքը և նրանց դեմքերը փայլում են: Աստծո զորությունն ասում է. «Ահա այդպես: Ահա այդպես, մենք Աստծո զավակներն ենք: Մենք բոլորս մի մեծ, հսկայական եկեղեցի ենք, մի մեծ, հսկայական անձնավորություն ենք Քրիստոս Հիսուսում, Նրա Հարսը, փառավոր»: Տիրոջ գալուստը մոտենում է: Նրա ժողովուրդը հավաքվում և սիրում է ինքնա... Նրա ներկայության սիրով և զորությամբ: Ո՛հ, սա երկնքի նման է: Ո՛հ, սա լավ է: Ամեն: Ո՛հ, որքա՜ն փառավոր է, որքա՜ն հրաշալի է. պարզապես երկրպագում ենք Տիրոջը Հոգով և զորությամբ: Այդպիսին է ժամանակը: (Դա պետք է դադարեցվեր. մենք սկսում ենք):

156 Պարզապես չկա ոչ մի... Ես ասացի եղբայրներին. «Եղբայրներ կանգ առնելու տեղ չկա»: Այստեղ ոչ մի տեղ չկա, որտեղ... Մենք երբեք չենք սկսել, ուստի կանգ չենք առնում. Պարզապես, պարզապես հրաշալի... Քանի՞ս են իրենց իսկապես լավ զգում: Պարզապես Տիրոջ ներկայությունը, ո՛հ, Աստված իմ, դա հրաշալի է, Տիրոջ ներկայությունն այստեղ է:

157 Հիմա, Տիրոջ ներկայությունն այստեղ է, որ բժշկի հիվանդներին, առողջացնի մարդկանց: Պարզապես հավատացե՛ք Նրան: Դուք հավատո՞ւմ եք Նրան: Եթե կարողանանք հավատալ Նրան, ամեն բան հնարավոր է: Դուք հավատո՞ւմ եք դրան: Հավատո՞ւմ եք, որ դա Տիրոջ ներկայություն է:

158 Հիմա, մինչ դուք... Ինձ տվեք ընդամենը մի րոպե, ընդամենը մի րոպե հիմա, և ընդամենը մի րոպե լսեք: Թույլ տվեք ինձ ապացուցել ձեզ, որ սա Սուրբ Հոգին է այստեղ: Թույլ տվեք ինձ ցույց տալ ձեզ, որ սա Սուրբ

Հոգին է, հենց Նա, ով խոսում է, Նա, ով բան է անում, գիտի դա: Քանի՞սն են հիմա այստեղ, որ հիվանդ են եկել: Տեսնեմ ձեր ձեռքերը: Նրանք, ովքեր հիվանդություն են ունեցել.... Կան մարդիկ...

159 Այնտեղ մի մարդ է կանգնած: Դուք հավատո՞ւմ եք, պարո՛ն: Աղոթքի քարտեր չեն բաժանվել, բայց դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ձեզ բժշկել: Հավատո՞ւմ եք, որ Նա կարող է ինձ ասել, թե ինչ խնդիր ունեք դուք: Դա ձեր կողում է: Դուք պատրաստվում եք վիրահատության: Դա ճիշտ է: Ձեր անունը պարոն Քարթրայթ է: Դա ճիշտ է: Դա ճի՞շտ է: Ձեռքով արեք: Շատ լավ: Վերադարձե՛ք տուն և եղեք բժշկված, դրա կարիքը չեք ունենա: Հավատո՞ւմ եք դրան:

160 Այն տղամարդը, որ այդ երեխային պահում է իր բազուկների վրա, հավատո՞ւմ եք, որ ես Աստծո ծառան եմ: Հավատո՞ւմ եք, որ սա Սուրբ Հոգին է: Ես ձեզ չեմ ճանաչում, ճի՞շտ է: Երբեք չեմ տեսել իմ կյանքում, մենք անծանոթ ենք իրար: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ հայտնել, թե ինչ է պատահել այդ երեխայի հետ: Նա ցան ունի: Դա ճիշտ է: Ճիշտ չէ՞: Անկասկած: Դուք այստեղից չեք: Ո՛չ: Դուք ինքներիդ տառապում եք ստամոքսի խանգարումից: Ճիշտ է, չէ՞: Դուք Կանզաս Սիթիից եք: Շատ լավ: Վերադարձե՛ք Կանզաս, Հիսուս Քրիստոսը բժշկում է ձեզ: Ալելուիա՜: Հավատացե՛ք: Հավատո՞ւմ եք դրան ողջ սրտով:

161 Ահա Տիրոջ հրեշտակը սավառնեց այս փոքրիկ, փոքրիկ նրբագեղ մի տեսակ տարեց կնոջ վրա, որ նստած է հենց այստեց, տառապում է ճողվացքից: Հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ կբժշկի այդ ճողվածքից, քո՛ւյր: Դուք, որ ձեր գլխարկի վրա փոքրիկ ծաղիկ ունեք, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Շատ լավ: Վերադարձե՛ք տուն և եղեք բժշկված: Ամեն: Ո՛հ, դա Աստված է. դա Քրիստոսն է՝ Աստծո Որդին: Նա հարություն է առել մեռելներից: Նա այստեղ է:

162 Հիմա, դրե՛ք ձեր ձեռքերը միմյանց վրա և թող ձեզանից ամեն մեկը պարզապես աղոթքի լավ ժամանակ մատուցի, մինչ ես կխնդրեմ, որ ինչ–որ մեկը գա այստեղ: Եկե՛ք այստեղ, եղբայր: Մինչ ձեր ձեռքերը միմյանց վրա են՝ ցույց տալու համար, որ Աստված նունպես բժշկում է, ես կխնդրեմ, որ եղբայրն այստեղ նույնպես աղոթք մատուցանի: (Սկսե՛ք: Լավ): Փառք Տեր Աստծուն:

60-0402 ԴՈՒ ՀԱՎԱՏՈ՞ՒՄ ԵՍ ՍՐԱՆ
«Մունիսիպալ» դահլիճ
Թալսա, Օկլահոմա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org